

- 110 Յայնժամ Յակոբ մեծ խորագէտ  
Շահէր զՂազար՝ Պետրոսն ըզհետ,  
Որք հաշուընկեր էին յայն կէտ  
Ի՛ Եպարքոսին վաճառապետ:
- 111 Որոց յանձնեալ զիւր ծանարտակ՝  
Խընդրէր տալ զայն ի բուն դաստակ  
Փոխարքային յայն ժամանակ,  
Յոր անըզբաղ կար միայնակ:
- 112 Ի ծանարտակն յայն անիրաւ  
Գրբեալ կային գանկատ անբաւ  
ԸջՍարգըսէ՛ որ հաւաստեաւ  
Չէր արժանի այնքմ՝ բընաւ:
- 113 Յորում Յակոբ իբր ի դիմաց  
Հայոց Ազգին եւ իշխանաց  
Ըզփոխարքայն մաղթէր ընդ այնց  
Վանել զՍարգիս բացէ ի բաց:
- 114 Չոր եւ ժըտէր բանտել ըզնոյն  
Յամրոցն Մալխայ Կիպրոս կղզւոյն  
Չի չար գոլով օգոյ տեղւոյն  
Փոյթ ըզտեղի տայցեն մահուն:
- 115 Ո՛վ բորբոքման չար նախանձու,  
Որ ոչ տուժիւ միայն ցածնու,  
Այլ բազմօք յոյժ մինչեւ մահու  
Նախանձելոյն անձեռընտու:
- 116 Ապա Ղազար Պետրոս տային  
Ի գիշերի Եպարքոսին  
Գիր ծանուցման Պատրիարգին,  
Չոր ձեռնագրել աղաչէին: